

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Արեղյանի անվան

գրականության ինստիտուտ

mihranhovhannisyan@inbox.ru,

+374 96199410,

<https://orcid.org/0000-0003-0359-4193>

DOI: 10.54503/1829-0116-2023.1-143

ՍՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ. ՄԱՐԴԸ` ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Բանալի բառեր - համամարդկային տառապանք, «տարօրինակ մարդ արարած», հոգեվիճակի բարդություն, գաղափարական ծուլում, «հափշտակիչ անցորդ», հայրենակորույս որդիներ, տառապալի աշխարհ, կարոտի կրակ:

Իր կյանքի վերջին շրջանում Մ. Իշխանը խոր կսկիծով ունկնդրում է կյանքի «եղերական համերգը» ու «աշխարհի ցավով հիվանդ» բանաստեղծի տրտուռ-բողոքը հնչում է համաշխարհային ցավի ելևէջներով, հնչում է որպես Նարեկյան «ողբի» Նոր արտահայտություն: Բանաստեղծը, բնական է, որ պետք է ապրեր Նաև ազգային ցավի տառապանքը: Մ. Իշխանի Էության մեջ մշտապես ալիքվում է տարագիր հայի տառապալից ճակատագրի նկատմամբ ունեցած տագնապն ու հուզումը: Հեղինակի վերջին գրգում մտասևեռումն առավելապես սփյուռքահայության ուժացման հարցերն են: Մերձավոր Արևելքի շեն գաղթօջախների քայքայումը, արտագաղթի, հայրության` երկրերակիր սփռումի իրողությունները:

МИГРАН ОГАНИСЯН

МУШЕГ ИШХАН-ЧЕЛОВЕК СО СТАРЫМИ И НОВЫМИ ПРОБЛЕМАМИ

Ключевые слова – всеобщее страдание, «странный человек», сложность психического состояния, идеологическая ассимиляция, «похищающий прохожий» сыновья которые потеряли родину, страдающий мир, огонь тоски.

В последний период своего творчества Мушег Ишхан глубоко вслушивается в «эпический концерт» жизни, и бормотание-жалоба поэта, «больного болью мира», звучит как новое выражение «плача» Нарека. Естественно, поэту пришлось испытать и народные страдания. В душе М. Ишхана постоянно нахлынули тревога и волнение по поводу многострадальной судьбы изгнанных армян. В последних книгах автора в основном обсуждаются вопросы ассимиляции армянской диаспоры. Распад диаспоры на Ближнем Востоке, эмиграция, реалии рассеяния армян по миру.

MIHRAN HOVHANNISYAN

MUSHEG ISHKHAN - A PERSON WITH OLD AND NEW PROBLEMS

Key words – universal suffering, «strange human being», complexity of mental state, ideological assimilation, «abducting passerby», patriotic sons, suffering world, fire of longing.

In the last period of his work, Mushegh Ishkhan listens deeply to the «epic concert» of life, and the murmuring-complaint of the poet «sick with the pain of the world» sounds like a new expression of Narek's «lament». Naturally, the poet had to experience the national suffering as well. M. In the essence of the prince, the anxiety and excitement towards the suffering fate of the exiled Armenians is constantly surging. In the author's latest books, the questions of the assimilation of the Diaspora Armenians are mostly discussed. The disintegration of settlements in the Middle East, emigration, the realities of Armenian dispersion across the globe.

Սփյուռքահայ գրականության մեջ քննարկվող թեմաները ըստ ժամանակային ընդգրկման կարելի է բաժանել երեք փուլի՝ մինչեղեռնյան, եղեռնյան և ժամանակակից: Մ. Իշխանն իր ստեղծագործություններում չունի առաջին ժամանակային ընդգրկումը, իսկ եղեռնյանը հիմնականում ներծծված է ժամանակակիցի մեջ: Այսինքն՝ նա ոչ թե ուղղակիորեն պատկերում է աղետ, այլ ներկա կյանքը պատկերելիս, արդիական ինդիվիդները քննելիս այս կամ այն չափով անդրադառնում է ցեղասպանության հարցին, փորձում ոչ թե ուղղակիորեն ներկայացնել տեղի ունեցած դեպքերը, ինչը խիստ ժամանակավրեպ կլիներ եղեռնից տասնամյակներ անց, այլ վերլուծել և դեպքերը քննել

ժամանակի պատմաաշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում: Մի շարք գործերում էլ հեղինակն անդրադառնում է ոչ միայն հայ մարդուն, այլ նաև ընդհանրապես մարդուն և նրա առաջ ծառացած խնդիրներին:

Մ. Իշխանի քնարերգության գաղափարական այս փուլն ընդգրկում է «Տառապանք» (1968թ.), «Ոսկի աշուն» (1969թ.), «Արևամար» (1986թ.) և «Իրիկնալոյս ռումբերու տակ» (1991թ.) ժողովածուները: Եթե «Ողջո՛յն քեզ, կեանք» (1958թ.) ժողովածուն գրվել է Լիբանանի հայ գաղթօջախի ծաղկման շրջանում, որն այս դեպքում բարենպաստ հող հանդիսացավ հեղինակի կենսասիրական խոհերը գրի առնվելու համար, ապա վերը նշած ժողովածուների գրվելու ժամանակաշրջանները Լիբանանի գաղթօջախի ամար առավել քան անբարենպաստ էին: Արևելքից Արևմուտք ձգվող հայության նոր վերագաղթերը, քաղաքական անհաշտ մթնոլորտը, ուժացման վտանգը և բանաստեղծի հասուն, խորաթափանց միտքն ու մարդու կյանքի ճանաչողության որոշակի պաշարը հիմք դարձան նրա քնարերգության այս փուլի համար:

3.1 Տառապանք՝ համամարդկային. «Աշխարհի ցավով հիվանդ է հոգիս»:

Եթե «Ողջո՛յն քեզ, կեանք» ժողովածուն բանաստեղծի՝ գաղափարական առումով «Հանուր մարդոց» ցավին անցնելու սկիզբն էր, ապա «Տառապանք» ժողովածուն «աշխարհի ցավով» տառապողի ապրումների, մորմոքի ու բողոքի ի խորոց սրտի ասված խոսքեր են: Շարքի համար բնաբան է ընտրված արաբ բանաստեղծ Աբու Էլ Ալա Էլ Մահարիի տողերը.

Մենք կը տառապինք

Եվ ատիկա միակ բանն է,

Որ վստահ գիտենք (Իշխան Մ., Տառապանք, Բեյրութ,

1968, էջ 3):

Սփյուռքի հավատավոր բանաստեղծը խոր կսկիծով ունկնդրում է կյանքի «եղերական համերգը» ու «աշխարհի ցավով հիվանդ» բանաստեղծի տրտունջ-բողոքը հնչում է համամարդկային վշտի ելևէջներով, հնչում է որպես նարեկյան «ողբի» նոր արտահայտություն: Ժողովածուի բանաստեղծությունները մարդկային տառապանքի տարբեր դրվագներ են, ողբերգական ճակատագրերի հուզիչ պատ-

մուկություններ:

Նրան հուզում է ողջ մարդկության ճակատագիրը: Ու՞ր է գնում մարդը՝ այդ «տարօրինակ արարածը», դեպի առաջընթաց: Գիտատեխնիկական տարաբնույթ նվաճումներն արդյոք փոխե՞լ են նրա էությունը: Բանաստեղծը տալիս է ժխտողական պատասխան. «Դարեր կ'անցնին, գործիքներն ու մեքենաները կը փոխուին, իմաստութեան մատեանները կը բազմապատկուին, բայց մարդը իր խորքով նույնը կը մնայ: Նույն անողոք բռնակալը տկարներուն հանդեպ, նույն եսամոլը, որ չի կշտանար նիւթական հարստութիւններէն, նույն գազանը, որ կրնայ իր ձեռքերը ներկել հազարաւոր անմեղ մանուկներու, կիներու և այրերու արիւնով» (Մարմարա, Ստամբուլ, 15.09.1969, էջ 2): Մ. Իշխանը փորձում է քննել մարդուն այս իրադրության մեջ, գտնել նրա այսպիսի պահվածքի պատճառը:

Դարերի ընթացքում փոխվել են միայն մարդկային վայրագությունների ձևերը: Ասես նյութն ու հոգին դուրս են եկել խելահեղ մրցաշարի ու հաղթողը, ցավոք, նյութն է.

Ես ինչպե՞ս նստիմ խնջույքի սեղան

Եվ ըմպեմ ուրախ վայելքի գինին,

Երբ որ կը խլեն մարդիկ անվարան

Որբի մը բերնէն պատառը հացին... /էջ187/

Հանուն նյութի բախումը ունենում է ոչ միայն ցավալի ընթացք, այլ նաև ողբերգական հետևանքներ, նշենք, որ շարքում ընդգրկված են 1964-67թթ գրված բանաստեղծությունները, իսկ այդ տարիներին Լիբանանում շարունակվում և նոր թափ էր առնում քաղաքացիական պատերազմը: Այս շարքում բանաստեղծը դիտարկում է հատկապես ցավը աշխարհում տառապող մարդկանց, որոնց կարելի է բաժանել երկու տիպի.

1. Մարդիկ, որոնք դժբախտ են՝ ելնելով արտաքին պատճառներից:

2. Մարդիկ, որոնք տառապում են ներանձնական դժբախտությունից. չի ստացվել իրագործել նվիրական երազանքները:

Բանաստեղծը տեսնում է տառապող մարդկանց ու ինքն էլ տառապում է նրանց ցավով, «հիվանդ է» «աշխարհի վշտով»: Ցավալի է տեսնել այգաբացին «արև երիտասարդի» գնդակահարությունը («Այդ սեգ տղան»), լսել, թե ինչպես է մայրը սառը հողաթմբին, որի

տակ իր որդին է, օրոր ասում («Օրոր»), պատկերացնել այն հորինվող խոսքերը, որ պետք է ասեն վերին հարկի պատից պատահական ընկած և մեռած բանվորի արդեն որբ երեխային («Բանվորը»): Վերոնշյալ հերոսները տառապում են, որովհետև կորցրել են իրենց համար հարազատ մարդկանց, շարքում ունենք ներքին առճակատման հետևանքով տառապող մարդկանց անդրադարձ: Երեխան դժբախտ է և իր մանկությունը վայելելու փոխարեն ստիպված է ծուկ վաճառել («Համբույր»): Տառապանքն ավելի ուժգին է դառնում, երբ տեսնում է, թե ինչպես են իր հասակակիցներն անցնում անհոգ ծիծաղելով, իսկ ինքը ներքին անզոր ողբերգություն է ապրում, երբ տեսնում է երբևէ չզգացած մայրական քնքշանք.

Փողոցներու խիզախ տղան դողդողաց
Կյանքի դաժան ցուրտին դեմ...
... Սիրո անհաս տեսիլքին դեմ դողդողաց
Եվ ծերացավ հեղակարծ... /Էջ 201/

Նմանատիպ ողբերգություն է ապրում նաև ներկարարը, որը միշտ երագել է նկարիչ դառնալ: Կյանքի կարիքներն են ստիպել, որ նա «չոր հացի մը համար» դառնա ներկարար, սակայն որպես նվիրական մասունք միշտ իր մոտ պահում է թանկարժեք ներկ՝ արծաթափայլ տուփով՝ երագելով գործածելու մասին: Բայց անելանելի վիճակից միակ ելքը մարին է: Նկարիչ կոչվելու համար ծնված ներկարարը ինքնասպան է լինում խմելով «անեղծ յուղաներկը».

Լայն ըմբռնիսեց գինվությամբ գերագույն
Եվ պատերուն վրա դատարկ իր փորին
Ներկն այդ ընտիր բռնեց քարի պես տոկուն
Եվ դամբանեց իր հոգին... /Էջ 203/

Մարդկային տառապանքն անծայր է: Բանաստեղծի կարծիքով միայն իրավ մեծությունները, հանճարները կարող են ուժ ու զորություն տալ հոգում, որ նա առաջ ընթանա և կոչ չտա՝ մարդկային նեղությունը ու չարությունը քարշ տան Երկիր մոլորակը դեպի կործանում. «Չանազան գույնի վարդապետությունները բառերու հրթիռներ կը նետեն օդին մեջ, ապագայ երջանիկ աշխարհի կառուցման ծրագ-

րով: Ապագան, տեսանք, ո՛չ փիլիսոփայություն է, ո՛չ աշխարհակալություն: Գալիք լաւ օրերը պիտի ծագին միայն ու միայն բոլոր ազգերու խաղաղ գործակցությունից, եղբայրութեան ոգիով»(Իշխան Մ., Եղբայրութեան կարօտով, Մարմարա, Պոլիս, 04.09.1969, էջ 2):

Բանաստեղծը ցավում է, երբ տեսնում է տառապող մարդուն, զարմանում նրա «տարօրինակ» կեցվածքի համար: Նա ուզում է տեսնել մարդուն, որը կոչված է ապրելու, արարելու, ստեղծելու համար, ոչ թե կողոպտելու ու սպանելու: Բանաստեղծի՝ աշխարհի ցավով հիվանդ լինելու և տառապելու հիմնական պատճառն էլ **Մարդ-Աստված հարաբերության խզման գիտակցումն է**: Մարդու սիրտը Աստծո կողմից տրված է նրան սիրելու և ապրելու համար: Մարդն իր մեջ կրում է «Աստծո սրբավանդ շունչը», սակայն ժամանակակից մարդն ամեն քայլափոխի մոռանում է դրա մասին: Բանաստեղծը հեգնում է մարդկային քայլերը, որոնք արվում են արդարացնել փորձելու համար իրենց արարքները: Ներկայացնելով մարդուն՝ («Կը կոչվինք մարդ») հեգնում է նրա արարքները.

Մենք կ'աղոթենք հանապազ
խաղաղության, եղբայրության կարոտով
Բայց որպեսզի մեր կյանքն ըլլա ապահով՝

... Մենք կը մորթենք պզտիկ ու մեծ անխնա,
... Բայց դեմքը մեր միշտ կը մնա անաղարտ
Եվ կը կոչվինք մենք հոն **Մարդ** ... /Էջ217/

Արարելու կոչված մարդն ամեն քայլի մոռանում է այդ մասին:

3.2 Տառապանք՝ ազգային. «Հողին վրա ուրիշին», «Մինչև ու՞ր»

Արդեն «Տուներու երգը» գրքում ուրվագծվում է օտար աշխարհի «անհյուրընկալ մայրերով» քայլող քնարական հերոսը, որը կարոտաբաղձ հայացքով նայում է տներին, որոնցում մարդկային կյանքն է ընթանում և պատկերացնում է իր կորուսյալ տունը: Սկսվում է ընթացքը դեպի կյանք, որը լի է ոչ միայն երազներով, այլ նաև տառապանքով: Տառապանքն ու երազը, կյանքն ու մահը շատ սերտ են կապված իրար, նրանք «անբաժան երկու ընկերներ են»: Այս ամենը տեսնում է

բանաստեղծ-հերոսը, և իր հոգու ամբողջ խորությամբ զգում «կյանքն արյունոտ ամեն ցավը»: «Աշխարհի ցավով հիվանդ» բանաստեղծը, բնական է, որ պետք է ապրեր նաև **ազգային** տառապանք: Քնարական հերոսի եղբայր մեջ մշտապես ալիքվում է տարագիր հայի տառապալից ճակատագրի նկատմամբ ունեցած տազնապս ու հուզումը, որը շարունակվում է նաև կյանքի հետագա տարիներին գրած բանաստեղծություններում: «Կտակ» բանաստեղծության մեջ նա իր որդուն ժառանգություն է թողնում հայի ալեկոծ իր հոգին, որն անցել է փոթորկուն բազում դարեր: **Հայի անվան հետ մեկտեղ հանձնում է նաև «այգաշող երազը»**, որի կատարումը ժառանգի պարտականությունն է: Այսպես, ժառանգին է փոխանցվում ոչ միայն հայի ալեկոծ հոգին, միևնույն ժամանակ տառապալից ճակատագիրը, այլ նաև **լուսավոր երազները**:

Բանաստեղծին մի ուրիշ ցավ էլ է տանջում, անցնում են տարիներ, մոտենում է արևամարը, պղտորվում են անցյալի հուշերը, որին զուգահեռ թանձրանում է հայրենիքի կարոտը, և բանաստեղծը սկսում է բարձրաձայնել Մասյաց որդու կարոտի կանչն ու մորմոքը: Հայ որդին չի տեսել իր երկրի հավերժական առասպելը և գոյության սիմվոլը՝ Մասիսը, ինքը գրկված է հավերժական բարձունքը տեսնելու հնարավորությունից: Բանաստեղծը բացում է սիրտը ի լուր բոլորի. ի՞նչ է աշխարհն առանց Մասիսի, ի՞նչ է տեսել ինքն աշխարհում, երբ Մասիսը չի տեսել: Այս կարոտի ու սպասումների մեջ էլ ծնվում է խոր ընդհանրացումը. դժվար է Մասյաց որդու համար աչք փակել, մեռնել օտար ափերում առանց տեսնելու Մասիսը.

Ես շառավիղ հայկազյանց, հայու ժպիտ, հայու լաց,
Մասյաց որդի հարազատ՝ ես Մասիսը չտեսա.
...-Ինչպե՞ս աչքերս փակեմ, երբ որ, ո՛վ մահ, զիս կանչես,
Ես Մասիսը չտեսա... /Էջ 180-181/

Բանաստեղծության մեջ՝ կարոտի ու սպասումների մթնոլորտում, բարձրանում է Մասյաց որդու կերպարը: Կարոտախտի, սիրո տարերային ուժով բանաստեղծությունը ուղղված է աշխարհի բոլոր ծագերում ապրող հայերին: Սփյուռքահայերին ուղղված այս խոհ-բանաստեղծության գաղափարաբանությունը ավելի հստակ և ուղղորդված է ներկայացված Մ. Իշխանի բանաստեղծական հաջորդ գրքերում

«Արեւամար» և «Իրիկնալոյս ռումբերու տակ»: Այս վերջին գրքերում բանաստեղծի մտասկզբում առավելապես սփյուռքահայության ուժացման հարցերն են, լիբանանյան պատերազմի պատճառած ավերները, Մերձավոր արևելքի շեն գաղթօջախների քայքայումը, արտագաղթի, հայության երկրներկիր սփռումի իրողությունները:

Մ. Իշխանը իր «Տրովադայի ձին» հոդվածում գրում է. «Մեր պաշտպանած բերդի պարիսպները խոշոր ճաքեր ստացած են: Տրովադայի ձին բերդեն ներս սահած է, մեր մեջ է արդեն» (Մարմարա, Պոլիս, 11.07.1969, էջ 2):

Սփյուռքահայ մտավորականության մեծ մասը իր գաղափարական հարցադրումների հիմքում ունի սփյուռքահայության գոյատևման տագնապը, ուժացման դեմ պայքարի մտահոգությունն ու միջոցների փնտրտուքը:

«Արեւամար» ժողովածուն բաղկացած է Ա և Բ մասերից: Ա մասը իր մեջ ներառում է 24 բանաստեղծություն, Բ մասը՝ 12:

Գաղափարական առումով «Արեւամար» ժողովածուի Ա մասը մենք բաժանել ենք հետևյալ մասերի.

ա. Արդարության պատկերում(18)

բ. Բարձրաձայն հարց (2)

գ. Ուղենիշ-պատասխան (4)

Շարքը սկսում է «Օտար աշխարհի կռունկին» բանաստեղծությամբ: Միջնադարյան ակունքներ ունի պանդուխտի՝ կռունկին դիմելը:

Օտար կեղեքիչներից իր ընտանիքը ազատելու, ընտանիքը պահելու համար հայ ժողովրդի գավակները հաճախ են բռնել պանդխտության ճամփան: «Լուր ստանալու» և «լուր տալու» ինքնամխիթարիչ հույսով՝ պանդուխտներն իրենց հերթին, հարազատներն՝ իրենց, դիմել են երկրից երկիր չվող թռչուններին: Հիշենք թեկուզ միայն «Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս» սկզբնատողով ժողովրդի մեջ լայն տարածում գտած երգը:

Օտար աշխարհի անհարազատ երկնքում տեսնելով կռունկ՝ տարագիր հայի մոտ առաջանում է սառը դատողությանը չենթարկվող սրտաբուխ հարցը. «Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս»: Բայց նույն վայրկյանին արդեն իրականությունը սթափեցնում է հերոսին. չէ՞ որ էլ չկա հայրենիքը, հետևաբար չկա հայրենիքից «խապրիկ ուղարկողը»:

Կռունկին ուղղված խոսքը իրականության ցավախառն նկարագ-

րությանն է. իր երկրից յաթաղանի արյունոտ հարվածով կտրված է ժողովուրդը և երկրի հարազատ որդին խորթություն է զգում դեպի երկիրը, որի տեր է «անկրոն և մոլեկան» ազգը:

Կռունկին ուղղված խոսքը իրականության ցավախառն նկարագրությանն է. իր երկրից յաթաղանի արյունոտ հարվածով կտրված է ժողովուրդը և երկրի հարազատ որդին խորթություն է զգում դեպի երկիրը, որին տեր է «անկրոն և մոլեկան» ազգը: Կռունկի՝ «հայոց աշխարհի ավերականերին» ծանոթ չլինելը, օտարությունը դեպի քնարական հերոսի կորուսյալ հայրենիքը, որով և պայմանավորված է քնարական հերոսի վերաբերմունքը դեպի կռունկը («Կռունկ, մի՛ մնար, գնա՛, հեռացի՛ր...»), ակամայից հիշեցնում են Մ. Պեշկոպաշյանի «Գարուն» բանաստեղծությունը, որտեղ էլ քնարական հերոսի հոգուն խորթ են և՛ օտար երկրի թռչնիկի ձայնը, և՛ օտար երկրի հովիտը. բանաստեղծի հոգին համակված է հայոց ավերակների վրա շրջող հովով ու թռչնիկով, սոճիների միջև սողացող հայոց պղտոր վտակով, քանի որ.

... Նոքա հառաչքն են հայրենյաց,

Նոքա չ'երթան սրտես ի բաց

(Պեշկոպաշյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1987, էջ 90)

Գաղափարական առումով իրար նման են բանաստեղծությունները, սակայն առկա է մի հանգամանք. **Պեշկոպաշյանի մոտ դեռևս կա երկիր՝ թեկուզ ավերակներով, իսկ Մ. Իշխանի մոտ բացակա է երկիրը և առավել ևս հայրենակիցը...**

Սփյուռքը փրկեց աքսորյալ հայերի մի մասին ֆիզիկական ոչնչացումից: Հայը իր հայրենիքը թողեց և սփռվեց աշխարհով մեկ: Նրանք, որ ֆիզիկապես փրկվեցին արյունոտ եղեռնից, մի պահ անցյալի արցունքին խառնեցին նոր կյանքի՝ կրկին արարելու տենչն ու մանկան զվարթուն ճիչը թեկուզ, ավա՛ղ օտար հողում: Սփյուռքի իրավիճակը այդպես է բնութագրում Վահե-Վահյանը. «Սփյուռքը այդ տարիներուն չգոցված վերք էր տակավին, չպաղած զայրույթ, չհագեցած ոխ: Որբություն էր ան «ոճիրեն ավելցած», մանուկերու շվարած բազմություն, որ դառնալե առաջ վաղվան հայը, կը կարոտեր պաշտպանություն ու խնամքին: Կորսված անորոշություններու կարոտն էր Սփյուռք, սիրո այրող վերհուշ: Տևական զրկանքներու և քարացած դառնութե-

յուններու հետ ամենօրյա շփումն տարօրինապես դարձած ջիղերու բորբոքումն էր երբեմն... դասալքությունն էր նաև, եվրոպական ոստաններուն մեջ մանավանդ ուրացում և ուժացում: Նույն ատեն մաքառում էր սփյուռքը հայի և երդիքի չափ լույսի համար...» (Վահե-Վահյան, Բերքահավաք, հ.գ, Բեյրութ, 1993, էջ 97): Այս ամենը տեսնելով Մուշեղ Իշխան բանաստեղծի (որ հենց այդ սերնդից էր) առջև հառնում է իրականությունը. «հայ կա ու չկա»:

Ինչպես արդեն ասվեց, «Արեւամար» ժողովածուի բանաստեղծություններն ունեն գաղափարական շարունակականություն. լրացնում են միմյանց: Ժողովածուի հաջորդ բանաստեղծությունները («Հոտ կորուսյալ», «Կ'երթան ու կ'երթան», «Մինչև ու՛ր», «Ու՛ր կերթաս») ունեն գաղափարական նույն հարցադրումը. ի՞նչ պետք է լինի սփյուռքահայերի վիճակը, ինչպե՞ս ապրել օտար հողում, օտար հողին չձուլվել, «չհալվել»:

Հայ ժողովրդի պատմության ամենամթամած և արյունոտ գիշերվանից մազապուրծ եղածներին օտար հողում ավելի քան երբևէ առաջնորդ, ուղղորդող է անհրաժեշտ: Հատկանշական է, որ ուղղորդողի դերում, որը պետք է լիներ, բայց չկա՝ հանդես է գալիս քրիստոնեական գաղափարախոսության կրողը՝ հոգևոր հովիվը, որն այս պարագայում հոգու առաջնորդն է.

Հոտը մոռացավ հովիվն իր
Հոտը մոռացավ փարախն ալ
Եվ սար ու ձոր ցանուցիր
Հոտը դարձավ կորուսյալ: /էջ234/

Իսկ անառաջնորդ հոտը նման է բնության անհեղ տարերքին թողնված աննավապետ նավի, որին տարուբերում է քմահաճարերքը: Հոտը ցրիվ է գալիս և ամեն քայլափոխի, կտոր առ կտոր, մաս է թողնում, ցրվում է: Անհովիվ հոտը թեկուզ ոչ արագ, բայց հաստատուն գնում է դեպի կործանում: «Ցաքուցրիվ երթը» շարունակվում է, բանաստեղծը հասկանում է այդ երթի աղետաբեր լինելը մի պահ նայում է ընթացքին. սգակիր է ներկան: Ու արդեն հուսահատ հարց է տալիս, թե մեր «ազնվագարմ ու տանուտեր ազգը» ուր է գնում, ընթանալիս էլ իր «հարուստ հանճարի լույսը սփռում է բոլորին, բայց ազգը մնում է տնանկ օտար հողում»:

«Հոտ կորուսյալ», «Կ'երթան ու կ'երթան», «Մինչև ու՛ր», «Ու՛ր կերթաս» բանաստեղծությունները շարքի մեջ առանձնանում են նրա-

նով, որ դրանցում է միայն նշվում հայի հավաքական տիպը, ինչպես «կորուսյալ հոտ», «շունչը հատնող ազգ», «հայոց դժբախտ ազգ»: Շարքի մնացած բանաստեղծություններում խոսվում և նշվում է արդեն հայ, հայրենակից և հայրենիք հիշեցնող, հայրենիքին զուգորդվող («Ճառ ծիրանի») խորհրդանիշներով:

20-րդ դարի դարավերջն էր, և Սփյուռքի ամենամեծ տարածության մեջ նոսրանում էին եղեռնից փրկվածների շարքերը: Օտար միջավայրի ու բարքերի ազդեցությամբ սերնդափոխությունը գնալով ավելի դժվար է դառնում, ամենակոպ տարերքի նման այն ոչնչացնում և տրորում է ազգային նվիրական արժեքները: Նոր սերնդի ինքնակործան հարմարվողականությունը օտար բարքերին գուցե ձեռքբերում էր նոր աշխարհին ընտելանալու համար, բայց հայրերի ու զավակների միջև առաջացրեց անդունդ, որը ծեր հայրերը սկսեցին լցնել կորստյան արդեն անդառնալի ցավով ու ափսոսանքով:

Ու ծագեց սարսափելի հարցը. մի՞թե վերադարձի դռները փակվելու են ամմիշտ, և միթե՞ դրանք փակելու են անտարբեր, օտարալեզու որդիները:

«Չմնաց» բանաստեղծությունը իրական ողբերգության ճշմարիտ պատկերումն է: Հեղինակի համար անիմաստ ու դատարկ է կյանքն այլևս. դողդոջ ծերունիներն ու մամիկները մեկ առ մեկ հանձնվեցին հողին, նորաբաց արևի տակ «պանդուխտի ա՛խ չմնաց», որքան արագ խլեցին մեր արտ ու դաշտերի ծաղկած երազը ու «կորուստի կանչ չմնաց», մեր հողը խունկ էր ու աղբյուրների ջուրը՝ դեղ, բայց գերված հոգիներում «աղբյուրի ձայն չմնաց», բայց վերքերի համար «արցունք ու ցավ չմնաց»: Եվ բանաստեղծի վիրավոր հոգուց հորդում է իմաստուն պատգամը, որը և՛ խորհուրդ է, և՛ կտակ, և՛ կրակ, և՛ անհերքելի ու հավիտենական ճշմարտություն, ուրիշի հողի վրա շինված տունը «հող է միայն, քար ու կիր», տնկած ծառը չի տա կյանքի հովանին, վառած լույսը «ցնորք է լոկ ոսկեծիր», սերը չի տաքացնում հոգին.

Եվ հողին մեջ ուրիշին

Քու ոսկորներդ անտեր

Յուրտեն հավետ կըմսին.../Էջ244/

Ելնելով տխուր իրականությունից՝ բանաստեղծի մոտ արդեն հարց է առաջանում՝ արդյոք եղե՞լ է լուսավոր անցյալը, և ինչու՞ է ներկան այդքան մթին: «Կար ու չկար» բանաստեղծության մեջ հեղինակը նշում է.

Հին վանք մը կար և սուրբ խաչքար,
Հիմա ժխոր և Եյֆելի աշտարակ... /Էջ 237/

Թվում է, թե ներկայացվում է բնական զարգացում. «հանդարտիկ տնակին» փախարհնում է «ամբարձիկ շենքը», բայց ոչ: Ցավալիս այն է, որ այդ տրամաբանական զարգացումը չի խնայում ազգայինը՝ այբուբենը:

Իսկ հաջորդ՝ «Ինծի կը թվի» բանաստեղծության մեջ արդեն արմատից հեռացումը այնքան խոր է, որ ինքն իրենից է հեռանում հեղինակը. «Ավա՛ղ, իմ անձիս օտար եմ սակայն...»:

Հայրենիքից և ինքն իրենից հեռացման գաղափարը շարունակվում է հաջորդ բանաստեղծություններում:

Խոսվում է հայրենիքի խորհրդանիշներից մեկի՝ ծիրանենու մասին, որի շուքի տակ է մեծացել հայը, բայց ծառն օտար հողում է, և դա էլ դեռ բավական չէ, օտար հողում էլ են կոտորվում: Արհավիրքից հետո էլ է ծաղկում ծիրանենին և պտուղ տալիս, սակայն այդ պտուղը այլևս նախկին համն ու հոտը չունի: Ու պատասխանն իմանալով հանդերձ՝ դառնացած հարց է ուղղում, թե ով է մեղավոր որ.

Քու հարազատ պտուղդ ըրավ վայրի դեղձ
Եվ անծանոթ արմատին... /Էջ 240/

Դժվար է խոստովանել, բայց փաստ է, որ հարազատ պտուղը անծանոթ է արմատին: Հոգեվիճակի բարդությունն ավելի խորանում է «Հայ եմ ես» բանաստեղծության մեջ, երբ տարեմուտին ընտանիքի անդամները հավաքվում են մի հարկի տակ՝ հայի օջախում, բայց... օջախը ամբողջությամբ հային չի պատկանում, որովհետև տան հարսը օտար է: Ընտանեկան ուրախությունը կիսվում է. լավ է, որ հայը փեսա է դարձել ու որդի էլ ունի, բայց լա՞վ է, որ օտար է հարսը: «Օտար հարս, հայ փեսա ու թոռնիկ կես առ կես», - մտորում է ալեհեր նանը և «նայվածքով բացակա կը խնդա ու կու լա...»: Օտար հողում ծաղկած պտուղը հեռու է արմատից արդեն կիսով չափ է հայ և քիչ է նման այն հային, որ հանուն իր հավատքի գնաց գիտակցված մահվան Ավարայրում: Եվ հայ մամիկը պատկերացմանը որպես ապացույց լինում է արդեն որդու հեռացումն ծնողներից: Ժամանակի անխախտ տրամաբանությամբ ինչքան փթթում և ծաղկում է պտուղը, արմատներն այնքան խորանում են հակառակ ուղղությամբ, կարծրանում, չորանում և ... մեռնում:

Կաղանդը, որ հավաքում է հարազատներին մի սեղանի շուրջ, բե-

րում է իր հետ խիստ և ուրախությամբ, այս անգամ բերում է իր հետ լուծություն, այնպիսի լուծություն, ինչպիսին իրերին ու պատերին է բնորոշ: Նստած են կաղանդի սեղանի շուրջ «ութը անձ»՝ «երկու պանդուխտ ալեհեր», «երկու բաժակ կիսով լի» և «չորս պատեր մերկացած»: Եվ չի գալիս նրանց այցի «Կաղանդ պապին»՝ ցանկությունների կատարողը, նա խելացի է. ի՞նչ ցանկություն ունեն կյանքի մայրամուտին կանգնած ծերերը՝ իրենց համար ոչինչ. միայն ողջությունը զավակների: Եվ նրանց բարեմաղթանքն էլ այդ է: Ծնողի համար միակ երջանկությունը զավակի բախտավորությունն է, թե զավակը իր մտածելակերպով քիչ է հաղորդակից նրանց: Ծնողները սպասում են իրենց զավակին, սակայն «փակ է դուռը», բայց հնչում է հեռախոսագանգ, որի հենց առաջին բառից էլ «**արդարացվում է» տխուր լուծությունը. ողջունը օտար լեզվով է.**

Հըլո՛ր պապա, հըլո՛ր մամ

Շնորհավոր նոր տարի,

Հուսամ, որ լավ անցուցիք

Ձեր երեկոն Կաղանդի... /Էջ 243/ (ընդգծումը մերն է Մ. Հ.)

Ու նորից լուծություն. միայն իրենց հասկանալի, իրենց համար ցավալի լուծություն, և ամփոփվում են իրենց մեջ երկու ալեհեր միայնակ պանդուխտները:

Հեռացումը արմատներից, հայրենիքից, հայ ժողովրդի երդին միշտ ուղեկից և վահան հանդիսացած հոգևոր արժեքներից շարունակվում է: Թեև մասնակից, բայց շարունակվում է նաև փնտրտուքը, պատասխանի որոնումը, թե ուր են գնում և ինչու: Բանաստեղծական շարքում դեռևս չենք տեսնում այդ հարցի բարձրաձայնումը: Քնարական հերոսը դեռ շարունակում է նայել, ցավել, բայց լուռ: Բանաստեղծի հայացքը, որն ուղղված է դեպի աշխարհ և մարդ, մեղմ է: Չնայած կյանքի պատճառած դառնություններին՝ նրա մոտ չկա զայրույթ: Կյանքի՝ իրեն և իր հայրենակիցներին պատճառած ցավը նրա մեջ ծնում է խոհ, հարց: Իրականությունը հաճախ հառնում է ցավալի ու տխուր պատկերումով, բանաստեղծը դառնում է մտախոհ, հաճախ հոռետես:

Տխուր է, բայց օտար հողում հայ ննջեցյալին հուղարկավորելու համար հայ քահանա չկա:

Օտար մի քաղաքում («Հոգվոց հայ ննջեցյալին»), ուր չկա ոչ մատուռ, ոչ հայ, ոչ հայ քահանա, որ վերջին հրաժեշտը տա ննջեցյալին

և ուղարկի բարձրյալի մոտ: Ճարահատյալ բերում են «օտար տեր-տեր մը», որը խնկարկում է հյուսում հայ ազգի փառքը՝ ասելով «գույգ մը աղոթք», որոնք խղճով են ողորմության պես: Ուշագրավ է, որ բանաստեղծը չի օգտագործում **աղոթել** բառը, այլ ասում է՝ «ըսավ գույգ մը աղոթք», որն ավելի անհամատեղելի է դարձնում հայ հասարակության և «օտար տերտերի» կապը. չէ՞ որ մեր հոգևոր նախնիները աղոթում էին «Ի խորոց սրտի»...

Եվ միայն հայերենով «Հայր մերը» երգելուց հետո են գգում, որ հանգստացավ իրենց հայրենակից ննջեցյալի հոգին, «թե մեռավ մեր սիրելին...»:

Մ. Իշխանի խոհը մեղմ ու խոնարհ եղբայրական թելադրանքով դրսևորվում է պատմողական պարզ ձևերի մեջ, խոսքի հանդարտ ընթացքով, առանց բարդացումների և չափազանցությունների, բայց տպավորիչ: **Բանաստեղծին բնորոշ է նաև անմիջականությունը, որ իրականության զգայական հետևանք է:** Նրա և՛ ուրախությունը, և՛ թախիծը հաղորդական են:

Եվ սրտաբուխ, բայց տխուր խոսքով նկարագրում է ժամանակի փոփոխությունը, հայերի՝ սկզբում կարմիր, այժմ՝ սպիտակ ջարդը.

Սպիտակ ժպիտ կա մահվան դեմքին...

...Հիմա չեն մեռնի դաշույնով, սուրով,

Այլ լուկ կը հալին... /Էջ247/

Մայր ու որդի իրար չեն ճանաչում, որդին լքում է հարազատ օջախը՝ օտար սերեր որոնելու համար: Եթե երեկ բանտն ու քսորն էր կործանում, ապա այսօր ոսկի դոյակն ու պալատը: Ճոխությունն ու հարստությունը թուլացնում են զգոնությունը: Հետևանքն անդամալի է լինում. **գաղափարական ծուլում:**

«Արեւամար» շարքի Ա մասում «Զյունհալ» բանաստեղծությունը գաղափարական առումով վերջինն է, որտեղ նկարագրվում է ուժացման վտանգը, հեռացումը արմատներից: Հաջորդ բանաստեղծություններում արդեն «լուռ» նկարագրություն չէ: Հեղինակը բարձրաձայնում է, հարցնում, թե ուր են գնում, դեռ ինչքան «կնահանջեն»: Եվ հուսահատված հարց է տալիս հենց վերնագրերով՝ «Ի՞նչ խոսիմ», «Ինչու՞»:

Առաջինի մեջ հեղինակը հուսահատ է, ասես համակերպված իր վիճակին: «Երգիչ» ու «տաղասացի» փոխարեն դարձել է «վշտահար դամբանախոս»՝ «անվերջ մեռնող մեր անցյալի սուգը» կրելով իր վրա:

Բայց այս «ողբակոծ» վիճակի մեջ էլ հեղինակը չի կորցնում իր վերջին հույսը, որի ցուրտ դեմքն էլ երևում, բայց հավատում է, որ այն կա.

Փակ փեղկերու մոտ

Ամեն առավոտ

Կ'երգեմ, տակավին չեմ գիտեր ինչու... /Էջ 250/

Շարքի (Ա մասի) վերջին չորս բանաստեղծությունները («Կը հավատամ», «Այս տղան անշուք», «Լսե», «Եթե կամենա») իր իսկ այդ հարցերի պատասխաններն են:

«Կը հավատամ» բանաստեղծության մեջ հեղինակը չի կորցնում հավատը, որ «մահամերձ կյանքի վրա» նոր արշալույս պիտի ծագի: Եվ ուղենշում է դեպի նոր արշալույս տանող ճամփան:

Աստվածորեն հավատա՜ր՝ նահատակների հարությանը, հավատա՜ր քո դարձին դեպի քո արմատները, դարձին դեպի քեզ, սրտով ու արյունով պահիր՝ հավատքիդ կայծը: Հավատը կայծը հրդեհ կդարձնի, և իրենը կդառնա իր թողած, մոռացված հայրենիքը:

Տխուր փաստ է, բայց հայրենի հողը հերկելու և հայրենիքում կյանք սերմանելու համար ծնված որդին մնաց «անտեր»: Ճիշտ է, ուժացման և ծուլման մեջ հայերն իրենց մեղքի մասնաբաժինն ունեն, բայց հեղինակը առանց այդ հարցը տալու պատասխանում է, թե մարդը մարդուն եղբայրաբար սիրելու փոխարեն մորթեց աշխարհի աչքի առաջ, իսկ աշխարհը, աշխարհի տերերը բուբոն անտարբերությամբ նայեց այդ ամենին, և այս է նաև պատճառը, որ՝

Այս տղան՝ անշուք

Դարձավ ողջակեզ, ճարճատող խարույկ,

Սրբազան խենթի գրոհի խելագար,

Խղճին դեմ մեռած աշխարհին օտար... /Էջ 251/

Շարքի վերջում էլ արդեն հեղինակը կոչ է անում հայրենակորույս որդիներին, որ «մայրական տաք կարոտով» հողը իրենց է կանչում:

«Լսե» բանաստեղծության մեջ Մ. Իշխանը շարունակում է հայ գրականության մեջ Դ. Վարուժանի և Հ. Թումանյանի կողմից կիրառված ձևը՝ մեկ բառի փոփոխությամբ գրվող բանաստեղծության ավանդը: Ինչպես Դ. Վարուժանը՝ «Ձոն», Հ. Թումանյանը՝ «Հայոց լեռներում» և «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունները, այնպես էլ Մ. Իշխանը իր «Լսե» բանաստեղծությունը կառուցում է բանաստեղծական տան առաջին տողի բառի փոփոխություններով, ինչպես «**հափշտակիչ** անցորդ է», «**նենգ** անցորդ է», «**կույր** անցորդ է», «**խուլ**

անցորդ է» (ընդգծումը մերն է Մ. Հ.): Բանաստեղծության մեջ կանչում է որդեկորույս մայր ողը և իր զավակը օտար հողում պետք է լսի, դարձի գա, գնա հայրենիք, որովհետև նա, ով այժմ հայրենիքում է (կորսված Արևմտյան Հայաստանում), տերը չէ, այլ անցորդ, որը բնութագրվում է վերը նշված մակդիրներով: Որդին պետք է լսի կարոտի կանչը.

Լսե՛,

Ձայն մը հեռվեն քեզ կը կանչե

Սոսիներու զով սոսափով,

Հայ լեռներում մեջ հեծեծող

Սրինգներու կախարդանքով:

Ան որ հիմա հոն կը շնչե՛

Երգ ու տաղի խով անցորդ է... /Էջ 252/

Մ. Իշխանն անշուշտ ժառանգել է արևմտահայ բանաստեղծության ոգին: Նրա նախորդը՝ եղերական բախտի բանաստեղծ Սիամանթոն, իր կյանքի մոայլ օրերին դիմում է հայրենի ահեղաձայն Եփրատին ու բնութագրում նրա ափերին ծաղկած մանկությունը հետևյալ կերպ. «Հույսով զեղուն, արևով խենթ ու անուրջով երջանիկ»: Նա հրավեր է կարդում հայրենի սերունդներին՝ վերադառնալ դեպի հողը: Մ. Իշխանի բանաստեղծության մեջ կանչում է հայրենի հողը, մայր հողը և «հրավիրում» իր՝ դեռևս որբ, հայրենազուրկ զավակներին:

Շարքն ամփոփում է «Եթե կամենաս» բանաստեղծությունը: Ցանկությունն ու հավատը գալիքը լույս կդարձնեն, ու թեև հեղինակի համար արդեն ուշ է, և ինքը չի տեսնի, բայց հավատում է երազը պայծառ գալիքի վերածելու ամուր կամքին:

Ինչպես ցավը վերջնականապես չի լուծվում արցունքի մեջ, և արյան մեջ՝ ոգին, այնպես էլ չի լուծվի օտարության մեջ հայի տեսակը, եթե չկամենա լուծվել.

Եթե ականջ տաս հայոց լեռներուն՝

Սիրտը ժիր գանգ է,

Եվ մինչև անգամ օտար տեղ ու տուն

Հայրենի վանք է... / Էջ 252/

Ամփոփելով նշենք, որ «Արեւամար» շարքը իր բարձրացրած հարցերով արդիական է նաև այսօր: Փաստացի արդեն շուրջ մեկ դար կորցրած մեր հայրենիքի ցավը պետք է ապրելու և պայքարելու ուժ տա մեզ, որպեսզի չկորցնենք նաև մեր «Հոգևոր Հայաստանը», որը եթե թվերի լեզվով համեմատենք շատ ավելին է, քան մեր բնիկ հայրե-

նիքը (Մեծ Հայքն ուներ 300հազ. Կմ² տարածք), որովհետև այն ընդգրկում է գրեթե ողջ աշխարհը, հայերն ամենուր են: «Արեւամար» ժողովածուի Բ մասում արդեն ներկայացվում է մարդու հրաժեշտը: Խոսվում է կյանքի և մահվան մասին: Կյանքի և մահվան միջակայքում մարդն է, որն այդ ընթացքում երագելով և տառապելով պետք է փորձի հասկանալ կյանքի խորին խորհուրդը: Սակայն կյանքի խորհուրդը հասկանալու համար շատ կարճ ժամանակ է տրված՝ **վերջից պետք է անցնել անվերջին**: Բանաստեղծը փորձում է մինչև կյանքն ավարտելը ըմբռնել նրա էությունը՝ «անիրականից անցնելով իրականին».

Ինչ որ վերջ ունի՝ սուտ է

ինչ որ անվերջ է՝ իրավ.

Երբ սուտեն անցնինք իրավին՝

Կ'իջնե վարագույրն այս խաղին... /Էջ 261/

Մուշեղ Իշխան բանաստեղծը վերջին գրքում կյանքը համարում է մշտահոս և հավերժաբուխ աղբյուր: Թեև մահվան շունչն արդեն զգացվում է, սակայն բանաստեղծը չի հավատում մահվանը.

Եթե սկսար հավատալ մահուան,

Մեռած ես արդեն,

Կեանքը կդառնա ցամաքած աւազան

Իր պարունակէն (Իշխան Մ., Իրիկնալոյս ռումբերու

տակ, Պէյրուզ, 1991, էջ 18):

Տառապալի աշխարհի և տարօրինակ մարդ արարածի պայծառ երագների մեղեդին է հնչում Մ. Իշխանի ողջ ստեղծագործությամ մեջ: Իր բանաստեղծություններով նա շատ տեսիլներ է ծաղկել, նրբազգաց զգացումներ պատկերել, երագները զուգադրել է կյանքին և մարդու հոգում կարոտի կրակներ է վառել:

Սփյուռքի հավատավոր բանաստեղծը երգեց մարդու կյանքը, որ կյանքն էր նաև հայի, և այդ երգը՝ ջերմ, խոհուն ու խորախորհուրդ իր հաստատուն տեղը զբաղեցրեց նորագույն շրջանի մեր բանաստեղծության մեջ:

Իր ստեղծագործության այս շրջափուլում Սփյուռքի հավատավոր բանաստեղծը խոր կսկիծով ունկնդրում է կյանքի «եղերական համերգը», ու «աշխարհի ցավով հիվանդ» բանաստեղծի տրտունջ-բողոքը հնչում է համամարդկային վշտի ելևեջներով, հչում է որպես նարեկյան «ողբի» նոր արտահայտություն: « Աշխարհի ցավով հիվանդ» բանաստեղծը, բնական է, որ պետք է ապրեր նաև ազգային տառա-

պանքը: Մ. Իշխանի եղբայրն մեջ մշտապես այլըփոխվում է տարագիր հայի տառապալից ճակատագրի նկատմամբ ունեցած տագնապն ու հուզումը, որն բացահայտվում է նրա վերջին՝ «Արեւամար» և «Իրիկ-նայոյս ռումբերու տակ» գրքերում:

Մ. Իշխանի վերջին գրքերում մտասուեռումը առավելապես սփյուռքահայության ուժացման հարցերն են, լիբանանյան պատերազմի պատճառած ավերները, Մերձավոր Արևելքի շեն գաղթօջախների քայքայումը, արտագաղթի, հայության երկրներկիր սփռումի իրողությունները:

Օգտագործված գրականություն

Սկզբնաղբյուրներ

1. Իշխան Մ., Երկեր, Նաիրի հրատ., Եր., 1999, 592 էջ:
2. Իշխան Մ., Իրիկնայոյս ռումբերու տակ, Պէյրուք, 1991, 144 էջ:
3. Իշխան Մ., Տառապանք, Բեյրուք, 1968, 113 էջ:
4. Իշխան Մ., Տուներու երգը, Պէյրուք, 1936, 84 էջ:
5. Պեշիկթաշյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1987, 564 էջ:
6. Վահե-Վահյան, Բերքահավաք, Կ. Գ. Սիփան հրատ., Բեյրուք, 1993, 408 էջ:

Տեսական գրականություն

1. Ավագյան Ա., Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, ԵՊՀ հրատ., Եր., 2004, 278 էջ:
2. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, ԵՊՀ հրատ., Եր., 2016, 424 էջ:

Ամսագրեր, հոդվածներ

1. Գաբրիելյան Վ., Հայաստանի տարագիր բանաստեղծը, Վեմ, № 4, Եր., 2014, 23 էջ:
2. Մարմարա, Պոլիս, 11.07.1969, 04.09.1969, 15.09.1969:

Միհրան Հովհաննիսյան - հետաքրքրության ոլորտը՝ հայ գրականություն, հայ գրականության պատմություն և տեսություն: Գիտական մամուլում

հրատարակել է հոդվածներ:

Мигран Оганнисян - область интересов: армянская литература, история и теория армянской литературы. Публиковал статьи в научной печати.

Mihran Hovhannisyán - region of interests. Armenian literature, history and theory of Armenian literature. Published articles in scientific press.

REFERENSIS

1. Ishkhan M., Works, Nairi publishing house, Yer., 1999, 592 pages.
2. Ishkhan M., Sunrise under the bombs, Beirut, 1991, 144 pages.
3. Ishkhan M., Suffering, Beirut, 1968, 113 pages.
4. Ishkhan M., The song of houses, Beirut, 1936, 84 pages.
5. Peshiktashyan M., complete collection of works, Yerevan, 1987, 564 pages.
6. Vahe-Vahyan, The Harvest, Volume C, Sipan Publishing House, Beirut, 1993, 408 pages.
7. Avagyan A., Illustrated history of Shahan Shahnur, YSU publishing house, Yerevan, 2004, 278 pages.
8. V. Gabrielyan, Armenian Diaspora Literature, YSU Publishing House, Yerevan, 2016, 424 pages.
9. Gabrielyan V., The exiled poet of Armenia, Vem, № 4, Yerevan, 2014, 23 pages.
10. Marmara, Polis, 11.07.1969, 04.09.1969, 15.09.1969.